# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| 1. | Անունը, ազգանունը | Արտակ Քամալյան |
| 2. | Զբաղեցրած պաշտոնը | ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| 3. | Գործուղման վայրը և ժամկետը | 2019թ. հունիսի 21-24-ը<br>Իտալիայի Հանրապետություն (Հռոմ) |
| 4. | Հրավիրող կողմը | ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) |
| 5. | Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը | Մասնակցություն ՊԳԿ-ի համաժողովի 41-րդ նիստին |
| 6. | Քննարկված թեմաները | Նիստի ընթացքում քննարկվել են պարենի և գյուղատնտեսության բնագավառների իրավիճակը, ՊԳԿ-ի տարածաշրջանային համաժողովների (ներառյալ Եվրոպայի տարածաշրջանի) հաշվետվությունները, գյուղատնտեսության, հումքի, ձկնաբուծության, պարենային ապահովության հարցերով կոմիտեների հաշվետվությունները, ՊԳԿ-ի 2018-2021 թվականների միջնաժամկետ ծրագիրը և ՊԳԿ-ի 2020-2021 թվականների բյուջեն: |
| 7. | Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը | Կայացել է հանդիպում ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) գլխավոր տնօրենի օգնական, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ներկայացուցիչ Վլադիմիր Ռախմանինի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ-ի և ՊԳԿ-ի միջև համագործակցության ուղղությունները, ՊԳԿ-ի կողմից ՀՀ-ում իրականացվող ծրագրերի ընթացքը:<br>Հանդիպումներ են կայացել նաև Ֆրանսիայի և Վրաստանի գյուղատնտեսության նախարարների, ինչպես նաև ԱՄՆ գյուղդեպարտամենտի ներկայացուցիչների հետ: Քննարկվել է գյուղատնտեսական քաղաքականությանն առնչվող հարցերի լայն շրջանակ: |
| 8. | Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, | Նիստի ընթացքում կայացել են ՊԳԿ-ի գլխավոր տնօրենի ընտրությունները, որի արդյունքում Գլխավոր տնօրեն ընտրվեց ՉԺՀ-ի կողմից առաջադրված Ցյույ |

| | | |
|---|---|---|
| | պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը | Դոնորը, որը պաշտոնավարելու է մինչև 2023 թվականը: |
| 9. | Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները | Առաջարկվում է քննարկել ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունում և Հռոմում տեղակայված այլ միջազգային կազմակերպություններում (Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ, Պարենի համաշխարհային ծրագիր) ՀՀ մշտական ներկայացուցչություն հիմնելու հարցը: |
| 10. | Գործուղվողները | ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արտակ Քամալյան |
| 11. | Ստորագրությունը, ամսաթիվը | 25.06.2019 |